Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Պ-937[5]-07.10.2024,28.11.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 47.7.-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ալկոհոլային խմիչքների» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը.

2) երկրորդ մասից հետո լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ

«Էներգետիկ ըմպելիքների գովազդը «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով, 15-րդ հոդվածի 1.1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 5.1-ին մասերի պահանջների խախտմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում գովազդատուի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 158-րդ հոդվածում՝

1) 17-րդ մասի «ալկոհոլային խմիչքներ,» բառերից հետո լրացնել «էներգետիկ ըմպելիքներ,» բառերը.

2) 18-րդ մասի «ալկոհոլային խմիչքների,» բառերից հետո լրացնել «էներգետիկ ըմպելիքների,» բառերը:

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 47-րդ մաս.

«47. Վաճառքի ցուցադրված էներգետիկ ըմպելիքները առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով) կամ «Խորհուրդ չի տրվում օգտագործել մինչեւ 18 տարեկան երեխաներին, հղիության եւ կրծքով կերակրելու ժամանակ, ինչպես նաեւ նյարդային բարձր գրգռվածությունից, անքնությունից, զարկերակային բարձր ճնշումից տառապող անձանց» գրառմամբ հատուկ տեսակի նշումով՝ ընթեռնելի եւ տեղադրված տեսանելի վայրում չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

Փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ
Պ-937[5]-07.10.2024,28.11.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերավերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 47.7.-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ալկոհոլային խմիչքների» բառերից հետո լրացնել «եւ էներգետիկ ըմպելիքների» բառերը.

2) ~~երկրորդ մասում «երեքհարյուրապատիկի չափով:» բառերից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր մաս.~~ երկրորդ մասից հետո լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ

«Էներգետիկ ըմպելիքների գովազդը «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով, 15-րդ հոդվածի 1.1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 5.1-ին մասերի պահանջների խախտմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում գովազդատուի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 158-րդ հոդվածում՝

1) 17-րդ մասի «ալկոհոլային խմիչքներ,» բառերից հետո լրացնել «էներգետիկ ըմպելիքներ,» բառերը.

2) 18-րդ մասի «ալկոհոլային խմիչքների,» բառերից հետո լրացնել «էներգետիկ ըմպելիքների,» բառերը:

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 47-րդ մաս.

«47. Վաճառքի ցուցադրված էներգետիկ ըմպելիքները առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով) կամ «Խորհուրդ չի տրվում օգտագործել մինչեւ 18 տարեկան երեխաներին, հղիության եւ կրծքով կերակրելու ժամանակ, ինչպես նաեւ նյարդային բարձր գրգռվածությունից, անքնությունից, զարկերակային բարձր ճնշումից տառապող անձանց» գրառմամբ հատուկ տեսակի նշումով՝ ընթեռնելի եւ տեղադրված տեսանելի վայրում չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ Պ-937-07.10.2024,28.11.2024-ՏՀ-011/1 ԵՎ ԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	**ՀՀ կառավարություն**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում առաջարկում ենք «երկրորդ մասում «երեքհարյուրապատիկի չափով:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.» բառերը փոխարինել «երկրորդ մասից հետո լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ» բառերով՝ ինկորպորացիայի արդյունքում խնդիրներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

2.	**Պատգամավոր՝ Ալխաս Ղազարյան**	«Գովազդի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի ը) ենթակետ	Նախագծի 2-դ հոդվածի 1-ին մասի ը) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ը) այն գովազդը, որի ժամանակ չի նշվում՝ «խորհուրդ չի տրվում օգտագործել մինչեւ 18 տարեկան երեխաներին, հղիության եւ կրծքով կերակրելու ժամանակ, ինչպես նաեւ նյարդային բարձր գրգռվածությամբ, անքնությամբ, զարկերակային բարձր ճնշմամբ տառապող անձանց: Այդ տեղեկատվությունը պետք է լինի հստակ եւ ընթեռնելի:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: